


Sidon Travel-ն իրականացնում է կանոնավոր չարտերային չվերթներ Երեւան–Փարիզ–Լոս Անջելես ուղերթով: Մեր հարմարավետությունը միջազգային մակարդակի է, գները միջազգայինից ցածր են, մշտական գործընկերներն աշխարհի խոշորագույն ավիաընկերություններն են: Հրավիրում ենք ձեզ թռիչքի եւ խոստանում օդային զվարճալի ճանապարհորդություն: Ֆիրման գրասենյակներ ունի Լիբանանում, Բեյրութում եւ Լոս Անջելեսում:

PUBLI SET

Սպասում ենք ձեզ հետեւյալ հասցեով. Երեւան, Սայաթ-Նովայի պող. 19 («Անի» հյուրանոցի 1-ին հարկ): Հեռ. 56-33-75, 56-33-76, ֆաքս 56-76-33:


Լուրերի Հոսք

## Ֆեդերալ կառավարությունը կաշխատի արդյունավետ

Երեկ Մոսկվայում Ռուսաստանի Գերագույն խորհրդի նախագահ Ռուսլան Խասբուլատովը հանդիպում ունեցավ Թաիլանդի արքայադուստր Մախա Չակրի Սիրինդոնի հետ: Հանդիպման ընթացքում, շոշափելով Ռուսաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակի զարգացման հեռանկարները, Խասբուլատովը հայտարարեց, թե «այժմ անհրաժեշտ է կանգ առնել զուտ տնտեսական բարեփոխումների վրա»: Այդ կապակցությամբ նա նշեց, որ «մեծ նշանակություն է վերապահում ֆեդերալ կառավարության գործունեությանը, որի խոսքը պետք է վճռական լինի»: Ըստ խորհրդարանի ղեկավարի, «վերջին համագումարում ընդունված որոշումը կտրուկ ուժեղացրել է կառավարության կարեւորությունը որպես էկոնոմիկայի կառավարման բարձրագույն մարմնի»: Նա ընդգծեց, որ Գերագույն խորհուրդն իրեն է վերապահում երկու պարտականություն՝ օրենսդրական եւ Սահմանադրության ու օրենքների կատարման վերահսկողությունը: «Մենք մտադիր չենք միջամտել կառավարման մեջ», ավելացրեց նա, եւ հուսով ենք, որ ի հայտ կգան դրական տեղաշարժեր, գործերը կլավանան, իսկ ֆեդերալ կառավարությունը կաշխատի արդյունավետ»: ԻՖ

## Գամսախուրդիան կոչ է անում պաշտպանել Մենգրելիային

Վրաստանի նախկին նախագահ Զվիադ Գամսախուրդիան կոչ արեց համաշխարհային հանրությանը պաշտպանել Մենգրելիայի բնակչությանն այդ շրջան լրացուցիչ զորամասեր մտցնելու Վրաստանի ռազմական հրամանատարության ծրագրերից: Երեկ հրապարակված դիմումի մեջ Զ. Գամսախուրդիան նշում է, որ Մենգրելիայի բնակչությունը «հայտարարել է իշխանությունների հանդեպ քաղաքացիական անհնազանդության մասին եւ թույլ չի տա կողոպտել իր գյուղերն ու քաղաքները»: Նա գտնում է, որ իրավիճակն այդ շրջանում սպառնում է «վերածվել լայնածավալ քաղաքացիական պատերազմի»: Մարտի 12-ին Վրաստանի պաշտպանության նախարար Թենգիզ Կիտովանին ազգային ռադիոյին տված հարցազրույցում հայտարարել է, թե մտադիր է լրացուցիչ զորքեր մտցնել Մենգրելիա՝ այդ շրջանի տարածքով անցնող բեռների անվտանգությունն ապահովելու նպատակով: ԻՖ

## Կարտադրվեն ուկրաինա-բրիտանական գլանակներ

Մարտի 12-ին Կիեւում անգլիական «BAT» ֆիրման եւ Պրիլուկիի ծխախոտի ֆաբրիկան համաձայնագիր են ստորագրել «BAT Պրիլուկի» համատեղ ձեռնարկության ստեղծման մասին: Համաձայնագրով նախատեսվում է, որ բրիտանական կողմը 35 մլն. դոլլար կներդնի ֆաբրիկայի արտադրական կարողությունների արդիականացման եւ ընդլայնման նպատակով: Համատեղ ձեռնարկությունը ծրագրում է բարելավել Պրիլուկիի գլանակների որակը եւ թողարկել նորերը: «BAT» ֆիրման թողարկում է «Քենթ», «Քիմ», «Լաքի սթրայք», «Հոլիվուդ» գլանակներ: ԻՖ


Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՅԱՄԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 581841

Տնօրէն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863

Apple® Macintosh®
համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Azg
armenian daily

Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Թերթի ձեւավորումն եւ տառատեսակների հեղինակ ՊԱՎԵԼ ԴԱԼԼԱՔՅԱՆ

ՀՀ նախարարների խորհրդին առընթեր «Պարբերական» հրատ. տպարան, Երեւան 23 Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Տպաքանակ 20 000. Պատվեր 1468 Ստորագրված է տպագրության 16.3.1993


digitised by A.R.A.R.@